

XVIII—XIX ԳԱՐԵՐԻ ԳՐԱԲԱՐ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ

ԼԵԶՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

XVIII—XIX դարերում զրաբար հայերենով գրվում են պատմական երկեր, ժամանակագրական, ուղեգրական, վարքագրական բնույթի աշխատություններ: Այդ շրջանում առանձնացվում է հայ ժողովրդի հասարակական-քաղաքական, մշակութային կյանքի որոշակի կողմերն արտացոլող այդօրինակ երկերի ստեղծման երկու փուլ՝ XVIII դարի սկզբներից մինչև 1784 թ. և 1784 թ. մինչև XIX դարի վերջերը:

Առաջին փուլի մեջ ընդգրկվող երկերը դերադանցապես «պատմություններ» են: Այդ երկերի լեզուն ժամանակի զրաբարն է, որ Երբեմն ենթարկվում է հին գրական լեզվի նմանությամբ «սրբադրական» միջամտության: Գործառական-ոճական առանձնահատկությունների կողքին նկատվում է հին պատմագրության ոճն ընդօրինակելու ձգտում: Այդպիսին են Ստեփանոս Շահումյանի, Աբրահամ Կրետացու, Աբրահամ Երևանցու, Եսայի Հասան Զալալյանի և խաչատուր Զուղայեցու երկերը¹:

Երկրորդ փուլում ի հայտ են գալիս պատմագրական աշխատություններ, որոնք սկիզբ են առնում Միրյանի Չամչյանի «Պատմություն հայոց» աշխատությամբ: Այդ երկերի լեզուն զրաբարն է, որ պարունակում է ժամանակի գրական աշխարհագրին բնորոշ ձևեր: Գրաբարն այսուհի ենթարկվում է հին գրական լեզվի օրինակով ավելի խոր «մշակման»: Այդպիսին են Միրյանի Չամչյանի, Հովհաննես Սեբաստացու, Մեսրոպ Թադևոսյանի, Մսեր Մսերյանի համարնություն երկերը, այլև «Համառոտ նկարագիր Մխիթարեան միաբանության», «Նկարագիր դպրոցականության հայոց ի Պարսկաստան է Ռուսաստան», «Նկարագիր վարուց Ստեփանոսի Ազոնց» աշխատությունները: Երկրորդ փուլում գրվում են նաև մի քանի սեղմ «պատմություններ», որոնք սլահվում են ձևագրի վիճակով²:

¹ «Դաւիթ բէգ. ընտիր պատմութիւն Դաւիթ բէգին և պատերազմաց հայոցն խափանու», Վաղարշապատ, 1871 (այսուհետև՝ ՍՇԳԲ): «Աբրահամ կաթողիկոսի Կրետացու Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ նատր-շահին պարսից», Վաղարշապատ, 1870, այլև՝ Աբրահամ Կրետացի, Պատմութիւն, քննական բնագիր, ռուսերեն թարգմանություն և ծանոթագրություններն Ն. Կ. Ղորղանյանի, Երևան, 1973 (այսուհետև՝ ԱԿՊ): Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմաց (1721—1736), Երևան, 1938 (այսուհետև՝ ԱԵՊՊ). հրապարակի վրա է վերջինիս քննական բնագիրը (Վենետիկ, 1977): «Պատմութիւն կամ Յիշատակ ինչ ինչ անդից՝ դիպիւց յաշխարհին Աղուանից, համառոտագրեալ ի Եսայի Հասան Զալալեանց», Երևան, 1839, այլև՝ «Պատմութիւն համառոտ Աղուանից երկրի, յօրինեալ ի Եսայի Հասան Զալալեանց», Երևան, 1868 (այսուհետև՝ ԵԶՊԱ). լեզվական բնութագրի առումով վերջինս ավելի հուսալի է: «Նաչատուր արեղային Զուղայեցու Պատմութիւն Պարսից (ԺԸ դար), աշխատութեամբ Բաբգէն վարդապետի Աղանլեանց», Վաղարշապատ, 1905 (այսուհետև՝ ՆԶՊԱ):

² «Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամառն 1784, յօրինեալ ի Միքայէլ Չամչյանց Կոստանդնուպոլսեցու», Կ. Գ. Վենետիկ, 1786, էջ 732—878 (այսուհետև՝ ՄՉՊՀ): Յովհաննէս Սեբաստացի, Պատմութիւն Սեբաստիոյ, աշխատասիրութեամբ Բ. Լ. Զուգասյանի, Երևան, 1974 (այսուհետև՝ ՅՍՊՍ): «Ճանապարհորդութիւն Մեսրոպբայ Գ. Թադևոսյանց...ի Հայս», Կ. Լ. Կալկաթա, 1847, էջ 1—100 (այսուհետև՝ ՄԹՃՀ): «Պատմութիւն պարսից յօրագրէ Մեսրոպպայ Գ. Թադևոսյանց, Կալկաթա, 1846, էջ 180—281 (այսուհետև՝ ՄԹՊՊ): Յիշատակարան կենաց եւ գործոց մեծանուն պայազատաց Լադարեան տոհմի, շարագրեալ ի Մսերայ Մսերեանց, Մոսկվա, 1856, էջ 1—60 (այսուհետև՝ ՄՄՀ): «Համառոտ նկարագիր Մխիթարեան միաբանութեան», Վենետիկ, 1819 (այսուհետև՝ ՀՆՄՄ): «Նկարագիր դպրոցականութեան հայոց ի Պարսկաստան է Ռուսաստան», Մոսկվա, 1832 (այսուհետև՝ ՆԴՀ): «Նկարագիր վարուց Ստեփանոսի Ազոնց Գիւլէր արքեպիսկոպոսի», Վենետիկ, 1825 (այսուհետև՝ ՆՎՍԱ):

³ Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարանի հետևյալ ձևագրերը. Առաքել Կոստանեան, Պատմութիւն Գաղա լանուց (ձեռ. № 3966, 1884 թ., այլև՝ ձեռ. № 3881). Յովհ-

Ս. Շահումյանի գիրքը շարադրվել և խմբագրվել է վենետիկցիների ձեռքով՝ հեղինակի բանավոր հաղորդումների հիման վրա: Այդ մասին տեղեկացնում է, օրինակ, Ղ. Ալիշանը. «Արդ յայսմ ժամանակի թելադրեալ է Ստեփանոս և տուեալ յերկրել միոյ ի Հարց աշակերտայ Մխիթարայ, այն է Հ. Ղուկաս Ստեփանեան Սեբաստացի, զՊատմութիւն մարտից Կահնեցոց»⁴: Երկի լեզուն մինչև այժմ չի արժանացել որևէ ուշադրության:

Ա. Կրետացու «Պատմութիւնն» ընդհանուր առմամբ ըստ պատշաճի է գնահատվում լեռնի կողմից. «...հազիվ թե ներելի լինի «Պատմագրութիւնն» անվանել այս աշխատութիւնը: Իր մեջ նա պարունակում է երկու տարվա և մի քանի ամսվա (1734—1736) անցքերը, որոնք տեղի են ունեցել կաթողիկոսի կյանքում, հետևաբար, նա պիտի համարվի հիշատակարան, որի մեջ հեղինակն արձանագրել է իր տեսածն ու իմացածը լոկ իրրև լրատու, առանց նույնիսկ տարբերելու կարևորն անկարևորից, փոքրը մեծից»⁵: Հ. Աճառյանն իր «Հայերեն նոր բառեր հին մատենագրութեան մեջ» (Վենետիկ, 1913) աշխատության ԺԳ գլուխը, որ ունի «Հայերեն նոր բառեր Աբրահամ Կրետացվո մեջ» (էջ 127—134) վերնագիրը, նվիրում է «Պատմագրութեան» և հարակից «Կոնդակի» մեջ ամփոփված հետևյալ բառերի քննությանը. առաջինը («ասեղնագործ»), դմլխեայ («գամասկոռյան» <արար. Dəməsq «Գամասկոս»), զեկ («գիտութիւն, տեղեկութիւն»), քեպուր («սկիւտուր»), խօսացաւր («խոսանալու, մեծավոր»), կաաադունի («իջևան, հյուրանոց, բնակարան» <հուն. κατὰ ὄνομα), հացուտ («հացաշատ, հացավետ»), մետաղ («օթևան, իջևան»), մոռսել («ծաղրել, մեկի վրա խնդալ»), մամար («գամ, բեռն» <արար. mišmar), նեղանձուկ («նեղ, շատ նեղ»), շոդային («շոգ, տաք»), ունի («աղշիկ կամ կին՝ իգական սեռի անձ»): Այդ բառերը պարզաբանվում են ստուգաբանորեն-իմաստաբանորեն՝ առնված հայերենի ընդհանուր բառապաշարի մեջ:

Ե. Հ. Զալալյանի «Պատմութիւն Աղուանից երկրի» աշխատութիւնը ցարդ չի արժանացել լեզվական որևէ քննության:

Ա. Երևանցու «Պատմութիւն պատերազմաց» երկի ձեռագրի լեզվի մասին լեռն գրում է. «Այս ձեռագրի հետ ես ծանոթացա 1908 թվին, Վենետիկ գնացած ժամանակ... պատմութիւնը գրված է մաքուր գրաբար լեզվով և պարունակում է իր մեջ շատ հետաքրքրական, մինչև այժմ անծանոթ մնացած մանրամասնությունները»⁶: Այդ երկի լեզուն նույնպես հին գրական լեզվի օրինակով ենթարկված է մշակման: Ըստ Ս. Զեմճեմյանի տվյալների, «երևանյան գաղափարաբարբառով, բացատրություններով և բառամթերքով» շարադրված սույն երկը գրաբարի է վերածել Ա. Գարագաշյանը: Լեզվի առումով, որն այս դեպքում խիստ կարևոր է, Ս. Զեմճեմյանն իր կազմած քննական բնագրի առաջաբանում նշում է հետևյալը. «Աբրահամ Երևանցիի պատմութիւնը կը ներկայանա մեզի սաղմնային վիճակի մեջ, զրված առանց ոճի և ընթերցողին հաճելի դառնալու մտահոգության: Կու գա բուն պատմագիրը (իմա՝ Ա. Գարագաշյանը—Վ. Հ.), կառնե նույն նյութը, կը կենդանացնե, կու տա անոր ոգի և կենսունակութիւնը և մատչելի կը դարձնե հանրութեան»⁸: Ս. Զեմճեմյանի կազմած քննական բնագրի լեզուն հիմնականում համընկնում է «Պատմութեան» Երևանի հրատարակութեանը. կան շնչին, լեզվական առանձնահատկությունների քննության տեսակետից էական արժեք չներկայացնող տարբերություններ:

Խ. Զուղայեցու «Պատմութիւն պարսից»-ը շարադրված է հեղինակին հայտնի գրավոր աղբյուրների համապատասխան տվյալների օգտագործումով: Գիրքն աղբյուրագիտական նյութ պիտի մատուցեր Զամչյանի «Հայոց պատմութեանը», քանի որ գրվում էր Զամչյանի ոչ ան-

⁴ Կանն էս Մ ո զ զ ո կ ե ց ի, Տետրակ պատմութեան (ձեռ. № 4597, 1845 թ.). Մանուէլ Կիւմուշխանեցի, Պատմութիւն անցից անցելոց Սևանայ (ձեռ. № 7554, 1830 թ.), Կարապետ Կպիսկոպոս (ձեռ. № 9795, գրված մինչև 1872 թ.):

⁵ «Սիսական. տեղագրութիւն Սիսեաց աշխարհի ի Ղևոնդեայ Ալիշան», Վենետիկ, 1893, էջ 301:

⁶ Զեռագիրը Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում է, քննական հրատարակութիւնը՝ «Բազմավեպ» հանդեսում (1977, № 1—2, էջ 298—324, № 3, էջ 555—590):

⁷ Լեռն, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1973, էջ 447:

⁸ Լեռն, Պատմութիւն Երևանի թեմական դպրոցի (1837—1912), Թիֆլիս, 1914, էջ 71—72:

⁹ Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պարսից 1721—1736 թուի, յառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ եւ ծանոթագրութիւններ պատրաստեց Սահակ Զեմճեմեան, Վենետիկ, 1977, էջ 8—9:

միջական հորդորով, «Պատմության» լեզուն Բ. Աղավեյանցը հետևյալ կերպ է բնութագրում. «Լեզվի կողմից Ջուղայեցին յուր զիրքը գրելիս ենթարկվել է այն պատմագիրների ազդեցության, որոնցից օգտվել է, ինչպես Մ. Խորենացու լեզվի ազդեցությունը հենց սկզբից բավականին նկատելի է: Ընդհանրապես զրված է լավ լեզվով, թեև աչքի են ընկնում խոշոր քերականական սխալներ, որ մեր հրատարակության մեջ նույնությամբ թողել ենք...»⁹:

Երկրորդ փուլի երկերը տպագրված են իրենց խմբական, հեղինակային բնագրերի հիման վրա, որի դեպքում, բնականաբար, բացառվում են բնագրերի զրազրական տարբերությունները: Ձևագիր երկերը ևս զերծ են այդ տարբերություններից, որովհետև ավանդված են հեղինակային օրինակներով:

Այս շրջանի պատմագրության լեզուն բնութագրվում է լեզվական հնարավորությունների կիրառության յուրահատկություններով: Ուշագրավ են հասարակական-քաղաքական կյանքն արտացոլող բառերը, համապատասխան անվանումները, նորակազմությունները: Առանձնապես են ժամանակի ըմբռնումներին հատուկ բառակապակցություններ, կան շարահյուսական փոփոխություններ: Բառապաշարային և քերականական այդ երևույթները նոր շրջանի գրաբար հայերենի զարգացման գործոնների ազդեցության հետևանք են, մասամբ՝ առանձին հեղինակների անհատական ուժի զրահման արդյունք:

Ա. Այս շրջանի զրարարի բառապաշարը համալրվում է պատմագրության երկերի նորարանություններով: Կարծիքներս, զործառական արժեքի տեսակետից, բաժանվում են երկու խմբի. 1) զործառական-ոճական տարբերակվածություն ունեցող և 2) սովորական՝ պատմագրության բառապաշարին երկրորդաբար առնչվող նոր բառեր ու բառերի խմաստային նոր կիրառություններ:

1. Գործառական-ոճական տարբերակվածություն ունեցող բառերն արտացոլում են տվյալ օտմանկաշրջանի պատմական միջավայրը, հասարակական հարաբերությունները, տնտեսական և մշակութային կյանքը: Դրանք ընդհանուր առմամբ հասարակական-քաղաքական հասկացություններին անվանումներ են, որոշ դեպքերում ունեն համապատասխան բնույթի տերմիններով արժեք:

Հասարակապետություն բառն, օրինակ, մեկ անգամ հանդիպում է «Համառոտ նկարագիր Մխիթարեան միաբնութեան» երկում: Մի կողմից հասարակապետությունը նորակազմություն է, որովհետև չի հանդիպում բառարաններում¹⁰, ստեղծված է հին գրական լեզվի հասարակ և պետություն բառերի բաղադրմամբ և առայժմ հնարավոր է նշել հիշյալ զրավոր աղբյուրի հիման վրա: Մյուս կողմից, բառն այստեղ կիրառվում է զործառական ակնհայտ արժեքով՝ արտահայտելով մոտավորապես «հանրապետություն» իմաստը. «Ըլուա ի վաճառականաց անտի զարգաւանդահող և քաջառողջ լինել Մօռայու՝ որ էր յայնժամ ընդ Վենետիկեան հասարակապետութեան» (ՀՆՄՄ, 24):

Հրապարակում հնում ունեն «կրակ՝ հուր ցանող» ընդհանուր իմաստը: ՀՀԲ-ն ուշ շրջանի զրարարի նորակազմությունների հատուկ բաժնում ավելացնում է նաև «թօփ, զոռպարա, թիֆենի» իմաստը, որ նշանակում է, թե այն կիրառվում է արդեն «մի տեսակ զենք» նշանակությամբ՝ ստանալով ռազմական տերմինի արժեք. «և ի ձայնէ հրացանացն որոտայր և թնդայր վայրն այն» (ԵՁՊԱ, 49). «բացի բազմութիւն հրացանաց անտի՝ օգնական լինէին և քսան և չորք շանթառք զործեացն թնդանթաց» (ՄԹՊՊ, 180):

Եթե հասարակապետությունը նախկինում հայտնի, առանձին բառերի բաղադրմամբ է արտահայտում նոր իմաստ, ապա հրացանը մինչև այդ հայտնի բառի նոր իմաստային կիրառություն է. առաջինը ձևաիմաստային, իսկ երկրորդը զուտ իմաստային նորաբանություն է:

⁹ «Խաչատուր արեղայի Ջուղայեցու Պատմութիւն պարսից», էջ ԺԲ:

¹⁰ Տե՛ս Բաղդիրք հայկազեան լեզուի, հ.հ. 1—2, Վենետիկ, 1749—1769 (այսուհետև՝ ՀՀԲ): Նոր բաղդիրք հայկազեան լեզուի, հ.հ. 1—2, Վենետիկ, 1836—1837 (այսուհետև՝ ՆՀԲ): Առեհոն բառարան հայկազեան լեզուի, II տպ., Վենետիկ, 1865 (այսուհետև՝ ԱԲ): Գ. Փեղ տ մ ա լ ճ ե ա ն, Բաղդիրք հայկազեան լեզուի, հ.հ. 1—2, Կ. Պոլիս, 1844—1846 (այսուհետև՝ ՓԲ): Ն. Բյուզանցի, Բաղդիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ԺԱ—ԺԷ դարուց, Ստոկհոլմ, 1884—1886 (Մաշտոցի անվ. Մատենադարան, Ն. Բյուզանցու արխիվ, ձեռագիր-մանրագրային, թղթ. 235 դ, վվր. 258ա-ժ): Թ. Աստվածատուրեան, Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց, Նրուսադեմ, 1895: ՀՍՍՀ ԳԱ հայկական քարտարանի (այժմ՝ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի հայկական համաբարբառի բաժին) նախաձեռնությամբ կազմվող «Հայկական համաբարբառի» զրաբար մատենագրության մինչև այժմ հայտնի հատորները:

Հասարակական-քաղաքական կյանքի նոր երևույթները և համապատասխան հարաբերություններն արտացոլված են նաև նոր շրջանի գրաբարի բառապաշարի մեջ: Նորակազմ բառերը առաջ են գալիս գրաբարին ընդհանրապես բնորոշ բառակազմական ներքին միջոցներով ու եղանակներով: Այդպիսին են, օրինակ, ազնառայարկ, խառնագնացություն, ծանառակ (սխառագիր), համանագրություն բառերը. «գալով ի յաղխտայարկ խորան ծառայի քոյ և ուրախ լինելով ընդ նմա» (ԱԵՊՊ, 65). «Բացի առանց գրամոյ և զեալ խառնագնացությանց, այս է ուսելնաց գործաւորացն» (ՅՍՊՍ, 132). «ոչ եղև իսկ նոցա հնար մատուցանել զծանառակս իւրեանց առաջի արքային» (ԽԶՊՊ, 225). «Ի մի ժողովեալ զխաւորաց քաղաքս՝ քահանայից և իշխանաց, և արարեալ զբազմակնիք ծանառակս առաքեցին առ Զաբարիա պատրիարքն» (ՅՍՊՍ, 93). «որում ըստ համանագրութեան նոյն նահանգապետի՝ սկիզբն արարեալ էր ի 16 էն դեկտեմբերի 1820 ամի» (ՄՄՂ, 29) և այլն:

Այսպես, ունենք նաև հետևյալ նորակազմությունները. ազգօգուտ (ձեռ. 7554), ալլագերեւէն (ՄԹՃՀ, 69), ատրպատականաբնակ (ՆԳՀ, 102), արհայակամբ (ձեռ. 9795), արհայացու (ՄԹՊՊ, 256), բազմակնիք (ՅՍՊՍ, 80), բարձրահրաման (ՄՄՂ, 7), քաղաքաւ (ՅՍՊՍ, 126), քաղազլովս (ՄԹՊՊ, 230), ինքնակալել (ՄԹՊՊ, 207), լեռնաբնակիչ (ԵԶՊՊ, 54), խնդրագիր (ձեռ. 7554), խորդանդայր (ԽԶՊՊ, 318), կալուածաքուտը (ձեռ. 3966), կնամահել (սխառագիր), ձեռ. 3966, հանրակշիռ (ՄԹՊՊ, 201), հաշուագումարություն (ձեռ. 3881), մահաւ (սխառագիր), ՅՍՊՍ, 87, պայազաազարմ (ձեռ. 3966), պայմանագրություն (ՀՆՄՄ, 29)¹¹, սակաւաձեռություն (ԽԶՊՊ, 307), ստորակնեկ (ՅՍՊՍ, 110), վայրենաբարություն (ՄԹՊՊ, 213), աստապակություն (ՅՍՊՍ, 42), փոխարհ (ՀՆՄՄ, 62, ՅՍՊՍ, 78) և այլն:

Հանդիպում են փոխառյալ բառերի հիման վրա կազմված, նույնպիսի գործառնություն ունեցող մի քանի բարդ և ածանցաբար բառեր. բեկնազեալ (ձեռ. 3966), քուրհացող (ԱԿՊ, 52), խանութին (ԱԿՊ, 106), հոռոմություն (ՄԶՊՂ, 747), չեբեգանայ (ձեռ. 4597), վալիություն (ԱԿՊ, 106), փրօփականտացու (ՄԶՊՂ, 763, այլև 767), ֆոսնկաշունչ (ՄԶՊՂ, 742), ֆոսնկացեալ (ՄԶՊՂ, 739), ֆրանկություն (ՄԶՊՂ, 735) և այլն:

Գործառական առանձին արժեք ունեն ուղղակի-պետական կյանքի զանազան կողմերը ներկայացնող, այդ բնագավառի նոր հասկացությունների անվանումների հանդիսացող բառերը: Այդպիսին են, օրինակ, դաշնակուտ, զինակազմ, քնդանօթ, հրացանաւոր, ձիավարություն, նոռանուան, սլատեղազմավարություն բառերը¹²: Օրինակ՝ «Այլ և ի ծածուկ դաշնակուտ ընդ խոժաղուծք ազինս լերանց եղեալ՝ նորօք վանցս ճանապարհաց ունէին» (ՄԹՊՊ, 227). «Ճախս առեալ քաջընթաց երիվարօք, և զինակազմ դրահիւք պահէին յանդիման ճակատուն» (ԵԶՊՊ, 49). «Ի յահեղ քնդանօթայց Ռուսաստանու քաջաբեալ հալլեցին իրրև զաղ և զսառուց» (ձեռ. 7554). «տալով ցնա զհետևակս հրացանաւոր զօրաց» (ԽԶՊՊ, 294). «Կրասոսկիկն կարգեցաւ պետ նորանուան երկրին» (ՆԳՀ, 27). «Եւ վասն դալիմք ձիավարութեան և պատերազմավարութեան» (ԱԿՊ, 129) և այլն:

Այսպես, բերենք նաև հետևյալ բառերը. ատրհանակ (ԽԶՊՊ, 317, ՄԹՊՊ, 250), դոնապանապետ (ՅՍՊՍ, 127), զօրագլխապետ (ՆԳՀ, 56), քնդանօթաձիգ (ՄՄՂ, 24), կապանել («ձերբակալել», «բռնել», ՄԹՊՊ, 24), կիսագնդապետ (ՆԳՀ, 35), հատագնդակ (ՄԹՊՊ, 253), մեծասահման (ԱԿՊ, 63), մղոնաչափ (ՅՍՊՍ, 91), յաղրանակություն (ԽԶՊՊ, 306), շխաղում (ՄՄՂ, 37), ոմբահար (ՄԹՊՊ, 226), ոմբաձիգ, հակ՝ ոմբաձիգ, լինել (ՄԶՊՂ, 793, ՄԹՊՊ, 254, ՄՄՂ, 17), սմբակոյս (իմա՝ սմբակակոյս, ԽԶՊՊ, 295), փողեռանոց (ՀՆՄՄ, 61, ՄՄ, 17) և այլն¹³:

Այս շրջանի պատմագրությունն արտացոլում է տնտեսական կյանքն իր բազմազան կողմերով: Այդ բնագավառում, ժամանակի բերումով, հանգես են գալիս նոր երևույթներ ու իրողություններ, որոնց վկայությունը համապատասխան գործառական արժեքով նորակազմ բառերի առկայությունն է: Այդպիսին են, օրինակ, դրամանոց («բանկ»), հացատուն, տաւրե-

¹¹ Պայմանագրությունը ունի ՓԲ-ը: Ալլագերեւէնը գտնում ենք «Իմաստասիրություն բարոյական» գրքում (Վենետիկ, 1793, էջ 711):

¹² Թնդանօթ-ն ունի ՀՀԲ-ն, ձիավարություն բառի առումով՝ ՀՀԲ-ն, ՆՀԲ-ն և ԱԲ-ն ունեն ձիավար («ձի հեծնելու վարժ», «ձիավար»), ձիավարություն («ձի հեծնելը, հեծնություն»), «ձիով կռիվ անել») ձեռքերը. նախնական այս ձևերի հիման վրա հետագայում դժվար չէր ձիավարություն նոր ձևը կազմելը:

¹³ Կապանաւորել «բռնել, կապել» ունեն ՀՀԲ-ն և ՓԲ-ն: Սմբակոյս-ն ունի ՀՀԲ-ն:

դին. փառատուն և նման բառեր¹⁴։ Օրինակ՝ «ստանձնեալ զպաշտօն խորհրդականի արքունի դատմանոցի, ձեռնամուկս այնուհետև ի բազում ինչ իրս գտաւ տէրութեան» (ՄՄԶ, 9—10), «որ ի հացատունս և ի փռատունս բնակէր» (ՄՉՊԶ, 757)։ «որք պահէին զկովս և հաւաքել զկիթս և զմեւ տաւառեղէնս (ձեռ. 3966) և այլն»։

Այսպես, կիրառվում են հետևյալ նորակազմությունները. ալիւրեոց (ՅՍՊՍ, 165), քաղեպազործ (իմա՝ քաղիքագործ. հՋՊՊ, 225), ձիքատուն (ՄԹՃԶ, 34), ձուլարար (ՅՍՊՍ, 122), մածնատուն (ՅՍՊՍ, 155), մոմավանառ (ՅՍՊՍ, 149), յարգանոց (ՅՍՊՍ, 166), շորանոց (ՅՍՊՍ, 151), սայլավար («սալլապան, սալլորք». ԱԿՊ, 68), սուրն (ՅՍՊՍ, 165), սրհարան (ՅՍՊՍ, 152), վարելանոց (ձեռ. 3966), տեղապահարան («տեղապահի սենյակը». ՄԹՃԶ, 33), տնտեսատուն (ՅՍՊՍ, 87, այլև՝ 157), փայտառան (ՅՍՊՍ, 165), օրավար («մեկ օրվա վաճառող». ՄՄԶ, 9) և այլն¹⁵։

Կան նաև մի քանի համատիպ բառային փոխառություններ. քուանֆառ (ՍՇԴԲ, 46), բվանկ (ՍՇԴԲ, 47, ԱԿՊՊ, 17), բարուր (ԱԿՊՊ, 36), դօր («գնդակ». ԱԿՊՊ, 17) և այլն։

Բառապաշարի նորակազմությունների առանձին խումբ են կազմում կրոնապաշտամունքային հասկացությունների անվանումներ հանդիսացող բառերը։ Դրանք այստեղ հանդես են գալիս համեմատաբար նեղ գործածություններով։ Այդպիսին են, օրինակ, արքայական, դատարկակնցութիւն, լուսաւորչածին, կովապաշտ, մոմատուն բառերը. «Յարդ վարէ զիշխանութիւն իւր արքայական և եպիսկոպոսական ի վերայ հպատակաց իւրոց» (ՀՆՄՄ, 59)։ «զի դոնեա զատարկակնցութիւն որ է մայր ամենայն մեղաց» (հՋՊՊ, 14)։ «զմերային լուսաւորչածին ազն կանչել» (ԱԿՊ, 79)։ «եւ զընչաւէտ վաճառականս, զկովապաշտ մլթանիս բազմութիւն գտեալ ի պանդոկս՝ կոտորեցին» (ԱԿՊՊ, 36)։ «մոմատուն հանդերձ մասնաւոր ցանկապատ պարտիզանով միաբանից (ՄԹՃԶ, 34) և այլն»։

Նույնպիսի կիրառություն ունեն նաև հետևյալ նորակազմ բառերը. աղտակցաբար (հՋՊՊ, 311), ապականագործութիւն (ձեռ. 3881), առաքելաձայն (ՆՎՍԱ, 7), դիագարդել (ԱԿՊ, 60, ՄԹՊՊ, 232), դիւրեղծական (հՋՊՊ, 285), զանգակաճառութիւն (ձեռ. 3966), ժամանայ (ՄԹՊՊ, 257), խոստովանաբայութիւն (ՆՎՍԱ, 20), հոգունակութիւն (ԱԿՊ, 36), մեռոնախառն (ԱԿՊ, 80), պատշաճայարմար (ՅՍՊՍ, 62, 71) և այլն¹⁶։

Իրրև գործառական-ոճական տարբերակվածություն ունեցող նորակազմություններ կարելի է առանձնացնել նաև զրական-մշակութային հասկացությունների անվանումներ հանդիսացող բառերը։ Դրանցից են, օրինակ, աշակերտակցութիւն, գրագրատուն, գրակազմութիւն, դասատետր («դասադիրք»), երկայնավէպ («երկարաբան, երկարաշունչ») բառերը¹⁷։ «աշակերտակցութեամբ հաշատրոյ քնոորհույն իւրոյ» (ՄԹՊՊ, 223)։ «Տրդատայ դրան գլուխն, գրագրատուն և զտեղապահարան, այսինքն պալատ տեղապահին» (ՄԹՃԶ, 33)։ «և անդ պատրաստեալ զդործիս զրակազմութեան՝ ժողովեաց անդր զմիաբանեալսն ընդ իւր» (ՀՆՄՄ, 22)։ «Յօրինեալ էր Մխիթարայ առանձին դասատետր վասն ամենայն ուսմանց, և զայն աւանդէր աշակերտաց իւրոց» (ՀՆՄՄ, 51)։ «Որ զորմէ յառաջ քան զմեզ ոմանք հեղինակք, երկայնավէպ ճառիւր յայնսսփիւս արձանագրեալ (հՋՊՊ, 265) և այլն»։

Նույնպիսի գործառություններ են հանդես գալիս նաև հետևյալ բառերը. աղնատաբան (հՋՊՊ, 23), բանախօսել (ձեռ. 7554), գաղիարէնագէտ (ՄԹՊՊ, 223), գեղագունել (ՅՍՊՍ, 146), գրգատուն (իմա՝ գրատուն, ձեռ. 7554), դասառութիւն (ձեռ. 7554), ունայնապատում (հՋՊՊ, 128), ուշիմափայլ (ՅՍՊՍ, 36), պատմաբանական (ՄԹՃԶ, 75), վնեմախոհական (հՋՊՊ, 128) և այլն¹⁸։

Այս շրջանի գրաբար պատմագրության լեզուն բնութագրվում է նաև բառերի իմաստային նոր կիրառություններով։ Վերջիններս բառային նորակազմությունների համեմատությամբ այնքան էլ մեծ թիվ չեն կազմում։ Դրանք շաղկապվում են տվյալ շրջանի լեզվամտածողությանը, արտահայտվում են բառի իմաստային ընդհանրական գրանցման մեջ՝ հանդես գալով իրրև բառի կոնկրետ կիրառություններ։ Դրանցից են, օրինակ, արձակալիւր («արձակված գիր՝ հրովարտակ»), բաւակաւնութիւն («ուղեմամբերք, պարեն»), զնդակ («հրացանից, ատրճանակից կրակվող մետաղն զանգված»), շրջաբերութիւն («գրամական շրջանառություն»), տղայաժողով

¹⁴ Դրամանոց-ը նշվում է միայն ՀՀԲ-ում՝ «ստակի սնդուկ» իմաստով։

¹⁵ Թաղեպազործ ձևը ունի միայն ՀՀԲ-ն, իսկ յարգանոց («մարազ») ձևը՝ միայն ՓԲ-ը։

¹⁶ Ժամանայ-ն ունի միայն ՀՀԲ-ն, իսկ ապականագործութիւն-ը՝ ՓԲ-ը։

¹⁷ ՀՀԲ-ն ունի երկարավէպ ձևով։

¹⁸ ՀՀԲ-ն ունի աղնատաբան-ը։

(«եբրեյանների գերեզմարում՝ բռնագրավում») բառերի իմաստային կիրառությունները. «թող զթագն արձակագրով Մահմեդայ զօրավարին Աղուանից, և ծնրեաց առաջի նորա» (ՄԹՊՊ, 181). «բայց ի նինուէ ոչ մերձեցան, զի շունէին զբաւականութիւն զօրաց, այլ հասեալ մինչև ի տեղի մի» (ԱԵՊՊ, 74). «անդ արարին զծակ ինչ նրբագոյն՝ զի անտուտ իսկ հարկանիցեն զնա գնդակաւ հրացանի և սպանցեն» (ԽՁՊՊ, 322). «և զգրամոյն շրջաբերութիւն առաւելովք դիրացոյց» (ՄՄՂ, 10), «և դադարեցաւ տղայաժողովն առ ժամանակ մի» (ՅՄՊՍ, 61) և այլն:

Այսպես, ունենք նաև հետևյալ բառերի իմաստային նոր կիրառությունները. առաջիկայություն («գոյություն, ներկայություն». ՆԳՀ, 30), արձանացուցանել («գրի առնել, արձանագրել». ՀՆՄՄ, 8), զօտեմարտիկ («առաջմիկ, զինվոր». ԱԵՊՊ, 17), քնդանօրս լարել («կոխի սկսել՝ հարահրել». ՄԹՊՊ, 261), խաշ հանել («խաշակնքել». ձեռ. 4597), հրեշտակախօս լինել («պատգամախոս՝ զեսպան լինել». ՄԹՊՊ, 222), հրեշտակախօսութիւն («պատգամախոսություն». ՄԹՊՊ, 222), մանկաժողով («եբրեյանների գերեզմարում՝ բռնագրավում». ՅՄՊՍ, 60), մարտից («միասին գործող ռազմիկների, թնդանոթների կրակատեղի». ՄԹՊՊ, 235), շարամանակ («ժամանակ». ՆԳՀ, 4), շնագրութիւն («մարդահամար». ձեռ. 3881), սեպուղիս (փոխաբերաբար՝ «մարդուն տրվող հեգնական անվանում». ՅՄՊՍ, 91) և այլն:

2. Այս շրջանի պատմագրության լեզվի բառապաշարի մեջ առանձնանում են բառային այն նորարանությունները, որոնք սովորական, պատմագրության ոճին ոչ անմիջականորեն առնչվող կիրառություններ են: Դրանց կիրառությունը պայմանավորված է ոչ թե պատմագրությանը բնորոշ գործառական առանձնահատկություններով, այլ այդ երկերի հեղինակների լեզվաոճական՝ բառատեղծական յուրօրինակություններով: Բառային այդ կարգի միավորները նույնպես ժամանակի լեզվամտածողության և բառակերտման հնարավորությունների արդյունք են:

Սովորական կիրառությամբ հանդես եկող բառային նորարանությունները նոր շրջանի գրաբար հայերենով շարադրվող բնագիրն ավելի են մոտեցնում ժամանակի կենդանի խոսքին և տվյալ շրջանի գրական աշխարհաբարին: Սովորական նորակազմություններն այստեղ ունեն համեմատաբար լայն կիրառություն:

Մ. Թադիսյանի գրաբարատիպ գրավոր խոսքում, օրինակ, հանդիպում են մի շարք նոր, սովորական կիրառությամբ ձևանուններ և բուսանուններ, որոնք գրաբարի բառապաշարի տեսակետից նորակազմություններ են, բխում են ժամանակի բանավոր, խոսակցական լեզվի գործուն բառապաշարից և գործառական արժեք կարող են ունենալ միայն համապատասխան բնույթի երկերում. համտ. իշխանաձուկն, ծովախոզ, սևախայտ, սրակնիթ, վարագանդուկն, ինչպես նաև աղլախնձոր, ճարճատուկ, սպիտակաբանջար և այլն: Օրինակ՝ «սևախայտ՝ դտանի Հրասդան նաև ձուկն ինչ յայս անուն կոչեցեալ. յարենման կարմրախայտի» (ՄԹՂՀ, 68). «Խոդադիտի, ծովախոզ կամ վարագանդուկն, է թերևս մեծագոյն լուղակ Հայաստանի, որ է ձուկն ինչ լերկամորթ, և ձեռով նման խոզի» (ՄԹՂՀ, 65—66) և այլն: Այնինչ, ասենք խոզովականման, հրաշափառապանծ, շամանդաղապատ և նման բառերն այնպիսի սովորական կիրառություններ են, որոնք հանդիպում են այս կամ այն հեղինակի գործում, բայց կարող են տարածված լինել այլ բնույթի երկերում: Օրինակ՝ «եղեալ ի ճանապարհէ խոզովականման» (ԱԿՊ, 66). «հասուցանել զբովանդակ հրաշափառապանծ գովութիւնս» (ԽՁՊՊ, 144). «օդ թանձր և շամանդաղապատ» (ՄԹՂՀ, 46) և այլն:

Հստ այդմ բերենք պատմագրության երկերում հանդիպող, ընդհանուր առմամբ սովորական կիրառություն հանդիսացող, տվյալ դեպքում գործառական կոնկրետ արժեք չներկայացնող հետևյալ նորակազմ բառերը. աղբերաշատ (ՅՄՊՍ, 158), անկողնարան (ՅՄՊՍ, 153), անտառանոծ (ԽՁՊՊ, 305), արմատապառ (ԽՁՊՊ, 266), բազմակնիթ (ՄՄՂ, 21), բարձրակարկառ (ԽՁՊՊ, 305), բարձրակնիստ (ԱԿՊ, 62), երկարքնկէց (ՄԹՊՊ, 254), ինքնաձոր (ՄԹՂՀ, 76), լուսաբանութիւն (ՄԹՂՀ, 27), խառնիհաղանեկ (ԽՁՊՊ, 266), խնդապատար (ԽՁՊՊ, 249), ծերպամուտ (ՄԹՂՀ, 69), համապատասխանութիւն (ՄԹՊՊ, 223), հեղաբեռն (ԽՁՊՊ, 245), ձիաբեռն (ՄԹՂՀ, 65), մառախապատել (ԽՁՊՊ, 309), յեղափոխիս (ԽՁՊՊ, 268), յոգնատարազ (ԽՁՊՊ, 13), նեղանցուկ (ԱԿՊ, 150), նորաբուսիկ (ԽՁՊՍ, 52), որսադեղ (ՄԹՂՀ, 77), չնաղանիստ (ԽՁՊՊ, 258), պարանոցան (ԽՁՊՊ, 33), պնչալեղ (ՄՄՂ, 91), սարաղաշտ (ՄԹՂՀ, 42), սխաղաշտ (ՄԹՂՀ, 42), վատառողջարար (ՄԹՂՀ, 47), վրանան (ԱԿՊ, 66, 106), տատամալիւր (ԽՁՊՊ, 111), տարաբախտ (ՄԹՊՊ, 189), ցամաքակողմն (ՀՆՄՄ, 40), օրստօրէական (ՄԹՊՊ, 263) և այլն¹⁹:

Որոշ սովորական նորակազմություններ ավելի շուտ հեղինակային, անհատական ոճի

19 ՓԲ-ն ունի բարձրակառ «բարձրաբերձ» ձևով: Նորաբուսիկ-ը հանդիպում է ՀՀԲ-ում: Վրանան, տարաբախտ բառերը նույնպես գտնում ենք միայն ՀՀԲ-ում:

աբղյունք ևն, Դրանք տեղ ևն գտնում նյութի շարահրանքի անմիջական պահանջներով, կամ /լ/ օտար լեզվի որևէ բառի դիմաց խոսքի ընթացքում սեփական լեզվի համապատասխան բառ դնելու նետներով: Ըստ այդմ հանդիպում են օտար բառի թարգմանությամբ և հեղինակային խոսքի անհատականությամբ պայմանավորված սովորական նորակազմություններ: Վերջիններս նույնպես կերտվում են լեզվի բառակազմական ներքին օրինաչափությունների պահանջով, և դաժ Բառերի ու բառարմատների նոր, յուրօրինակ համակցման հիմունքով: Այդպիսին են, օրինակ, եօթնաբուրդ, ցրկանուն կամ երկառուն բառերը, որոնք գրավոր խոսքի պատենություններ կոչված են փոխարինելու օտար բառերին: Այս կարգի նորակազմությունները համեմատաբար փոքր թիվ են կազմում և ունեն նեղ կիրառություն: Օրինակ՝ «Եւ յետ երկուց աւուրց ի յուլիսի 22 տարան և եղին զնա յեօթնաբուրդն, այն է եկտիխովէ, որ մնաց նա աւուրս 51» (ՄՁՊ, 744—745). «ցոկանուն կամ երկառուն, այլազգեհն ուզուն բուռայ կոչեցեալ» (ՄԲՃ, 69):

Որոշ ղեկավարում սովորական կազմությամբ հանդես եկող բառը ոչ այլ ինչ է, եթե ոչ օտար բառի սոսկական պատենում: Օրինակ՝ «Ոչինչ հայեցեալ ի վնաս առողջութեան անձինս՝ չոքայ ի լեռու դճրաման պայծառափայլութեան» (ՆԳԶ, 93—94):

Այնուհետև, տարբեր հեղինակների գրավոր խոսքում հանդիպող աշխարհանազգ, արփափիս, գեղափայլութիւն, եռաբաշափ, ճախազուրծ և նման բառերն այնպիսի սովորական կիրառություններ են, որոնք պայմանավորված են հեղինակային խոսքի յուրօրինակությամբ: Դրանք են զալիս կոնկրետ խոսքային իրադրության մեջ: Այս կարգի բառային կիրառությունների հանդիպում ենք այն երկերում, որոնցում համեմատաբար մեծ տեղ է հատկացվում խոսքի մանրամասնությանը, ուղղորդվում է դարձվում նախադասության «շքեղություններ»: Քերեք, օրինակ, հետևյալ նախադասությունները. «Կարի իմն վայելչադիր և գեղեցկատես, և զերկոսին դրունս սրբատանցն և զերկփեղկ դուռն տաճարին և արտաքոյ նորին ի մէջ ևկեղեցոյն զերկին խաչակալս սրբոց սեղանացն, նրբանշմար դրուագեալ բազմահնար ատաղձագործ ճարտարի քանդակուած, Երվանդանգ ցեղափայլութեամբ ճաճանչեալ, արփիանշոյլ ոսկւոյծութեամբ փաղփաղեալ, հրաշանկար պատկերազարդութեամբ պանծացեալ գործ քաջարուստ նկարչին մատենսի Յոհաննիսի Տօնիկեան Սեբաստացոյ, որ ամիսս վեց գործեցին» (ՅՄՊ, 141). «և երեւելի շքեղութեանց ի չիք դարձեալ զվայելչագեղ բնակութիւնս մեր պերճախոնին, և վսեմախոնական անձանց» (ԽՁՊ, 103): Այստեղ ընդգծված բառերը նյութի բովանդակությամբ և հեղինակների գեղեցկախոսությամբ պայմանավորված սովորական կիրառություններ են:

Ըստ այդմ ունենք այդպիսի կիրառությամբ հետևյալ նորակազմ բառերը. աղամանդայեռ (ՄՄԸ, 21), այդեպանդ (ԱԿՊ, 62), անմիջախտ (ՄԹՃԸ, 12), ապակեփեղկ (ՅՄՊ, 153), առողջասօր (ՅՄՊ, 158), գեղեցկազուրծ (ՀՆՄՄ, 65), դիմաքմաստ (ԽՁՊ, 97), դիւրագնութիւն (ՀՆՄՄ, 28), երկառածամանկեայ (ՀՆՄՄ, 49), երկցստիկոնեան (ՀՆՄՄ, 43), երկրպատես (ԽՁՊ, 246), իմաստեայեղ (ԽՁՊ, 153), լեղաչինջ (ԽՁՊ, 266), լուսաշողջող (ՅՄՊ, 147), ծաղկանշմար (ՅՄՊ, 146), ծաղկանշոյլ (ՅՄՊ, 147), ծաղկափայլութիւն (ՅՄՊ, 148), ծնփաբարի (ՅՄՊ, 146), կրախան (ՅՄՊ, 141), կրկնափեղկ (ՅՄՊ, 152), օսմուգաբան (ՅՄՊ, 76), հրաշածիր (ՅՄՊ, 36), ձուրբուրջի (ՅՄՊ, 147), մեծաբաղդ (ԱԿՊ, 63), մեծախել (ԱԿՊ, 56), մեղկաբնոյր (ՅՄՊ, 123), միակտուր (ՅՄՊ, 150), միախաղ (ՅՄՊ, 147), միափեղկ (ՅՄՊ, 152), նագաբան (ԽՁՊ, 326), նորածողով (ՄԹՊ, 243), ներանար (ՅՄՊ, 147), շփեղապէս (ԽՁՊ, 122), ուլիմամիտ (ՀՆՄՄ, 40), պերճահանդէս (ԽՁՊ, 325), վայելչացուցանողական (ՅՄՊ, 73), վայրդողանջ (ԽՁՊ, 105), փառաբեր (ՅՄՊ, 150), փռայաբի (ՅՄՊ, 165) և այլն:

Այսպիսի բառային նորակազմությունները, բացառությամբ ՀՀԲ-ում հանդիպող մեկ-երկուսի, չեն նշվում գրաբարի հիմնական բառարաններում, մատենագրական երկերի համաբարբառներում, Դրանք նորաբանություններ են, որոնք պիտի ընդհանուր պատմական ուսումնասիրության առնվեն գրաբարի առանձին փուլերի բառապաշարի հարաբերությամբ:

Բ. Այս դարերի պատմագրության լեզուն պարունակում է ձևաբանական որոշ փոփոխություններ: Դրանք հին դրական հայերենի դարգացման ընթացքում նկատվող ձևաբանական տեղաշարժերի արդյունք են: Ինչպես հայտնի է, լեզվի ձևաբանական իրողությունները, ի տարբերություն բառապաշարի, ավելի կայուն են և ենթակա չեն արագ փոփոխությունների: Դրաբար իբրև սովորովի և ավանդաբար փոխանցվող լեզվական վիճակ հայերենի նոր շրջանում

20 Երկրպատեսն, իմաստայեղ, նագաբան բառերը հանդիպում են միայն ՀՀԲ-ում: Միափեղկ, ալիև միափեղկեան ձևերն ունեն ՀՀԲ-ն և ՓԲ-ն: Միակտուր-ի դիմաց ՓԲ-ն ունի միակտուր:

յուրացվում է քերականական կանոններով, և հազվադեպ են քերականական կառուցվածքում թուլատրվող շեղումները: Այդուհանդերձ, նոր շրջանի գրաբարի ձևաբանական համակարգում նկատվում են որոշակի տարբերություններ, որոնք պայմանավորված են ժամանակի գրական աշխարհաբարի և մասամբ նաև բարբառների ազդեցությամբ:

Ձևաբանական միավորների տարբերություններն, ի հակադրություն բառապաշարի. աչքի են ընկնում ավելի պակաս գործառական-ոճական արժեքով: Սակայն պատմագրության երկերի լեզվական բնութագրի ամբողջականության տեսակետից դրանց անդրադառնալն անհրաժեշտ է: Այդ տարբերություններն այստեղ հանդիպում են հատկապես անվանական և բայական կաղ-մություններում, հանդես գալով հիմնականում իբրև նոր կամ զուգահեռ ձևեր:

Ձևաբանական նորակազմություններ են, օրինակ, ի գիտլեն (փխ. ի գեղլէ), նորուն (փխ. նորին), նոֆոֆ (փխ. նոֆոֆ), ոչ արգելին (փխ. ոչ արգելութին). «և ալ ի մահտեսեաց և ի դի-պլէն յուրվք (ԱԿՊ, 39)». «յանգիմանեաց զնա յառանձին սենեկի նորուն» (ՄԶՊՇ, 135). «և ել նոֆոֆ հանդերձ՝ վեղար ի գլուխ» (ՄԶՊՇ, 734). «պարիսպ սրբաբնակ տեղւոյն ոչ արգելին զնա» (ՆԳՂ, 19) և այլն:

Ունենե նաև հետևյալ օրինակները. կղզոյն||կղզոջ (փխ. կղզայ. ձեռ. 7554), գիւերէից (փխ. գիւղորէից, ալլև՝ գիւղերայ. ձեռ. 3966), քնդանօրից||քնդանօրօֆ (ՆԳՂ, 23, ՄԶՊՇ, 739, 851), ուստէֆէ (փխ. ուստեֆ. ՄԹՊՊ, 244), զայրս (փխ. զարս<արֆ. իձՊՊ, 256), ի վանֆս (փխ. ի վան, ԱԿՊ, 52, ալլև՝ ի վանֆն, ԱԿՊ, 53), զազանոյ (փխ. զազանի. ԱԿՊ, 58), բլրիս (փխ. բլրայն. ԱԿՊ, 63, 66), անցանիցէր (ՄԵԴԲ, 75) և այլն:

Այսպիսի շեղումներից բացի կիրառվում են աշխարհաբարյան ձևեր. դրանք շատ են, օրինակ, կրետացու երկում. քաղեցիւն (421), նաւանֆ (43), կմանացուցանէ (44), կլիւլ- (45), կերցուցին (50), մոմերով (53) և այլն:

Գ. Այս դարերի պատմագրության լեզուն պարունակում է այնպիսի նոր բառակապակցու-թյուններ, որոնք արտահայտում են տվյալ շրջանի հասարակական հարաբերություններին բնորոշ հասկացությունների բաղադրյալ անվանումներ: Այդպիսին են ֆրէական յանցանֆ, բուպլի քղրադրամ, քատրոնական խաղարկութիւն («թատերախաղ»), միապետական իշխանու-թիւն («միապետություն») միավորները. «եղին ի վերայ նորա և ի վերայ երկուց ծանօթից նո-րին գրէական յանցանս» (ՄԶՊՇ, 754), «եթող կտակաւ յամին 1801 երկերիւր հազար բուպլի քղրադրամ» (ՄՄՇ, 15), «յորում տայր մանկանց ձևացուցանել զքատրոնական խաղարկու-թիւնս» (ՀՆՄՄ, 55), «հիմն եղ միապետական իշխանութեան Արշակունեաց» (ՀՆԳ, 4) և այլն:

Այդպիսին են նաև հետևյալ բառակապակցությունները. Ապարանեան պատերազմ (ՆԳՂ, 22), բարձրահաման հրովարտակ (ՄՄՇ, 7), բարօր կեանֆ (ՆԳՂ, 72), գնդակաւոր քօփ (ԱԿՊ, 30), եղբայրական գրկախառնութիւն (ՆԳՂ, 21), քնդանօրակիր զօրֆ (ՆԳՂ, 22), ժա-մանակաւոր կանաւարութիւն (ՆԳՂ, 27), խորհրդական արֆունի դրամանցի (ՄՄՇ, 9), կա-րաքինեան գունդ (ՆԳՂ, 100), կայսրութիւն ռուսաց (ՄՄՇ, 33), կովկասեան գունդ (ՆԳՂ, 80), հրագէն գնտակ (ԱԿՊ, 32), հրացան երկարնկէց (ՄԹՊՊ, 254), նորանուան երկիր (ՆԳՂ, 26), պատուադիր նշան («մեծ խաչ». ՄՄՇ, 38), պարսկային արքա (ՆԳՂ, 21), պարսպապան զօրֆ (ՆԳՂ, 24, 25), ռմբաձիգ գունդ (ՆԳՂ, 97), ռմբաձիգ զօրֆ (ՄՄՇ, 17) և այլն:

Ինչպես նկատելի է, նոր բառակապակցությունների մեջ լրացումները մեծ մասամբ առա-ջադաս են: Դա պայմանավորված է բառակապակցական պատճենմամբ, ինչպես նաև աշխար-հաբարի զգալի ազդեցությամբ:

Դ. Պատմագրության երկերի լեզուն աչքի է ընկնում նաև շարահյուսական կառուցվածքի նկատելի փոփոխություններով: Այստեղ ոչ միշտ են հարադատորեն պահպանվում հին դրա-կան հայերենի շարահյուսական սկզբունքները: Որքան էլ ակնառու է հին պատմագրությանը նսանվելու ձգտումը, այլև երկերի լեզվական մշակումը գրաբարի կողմնակիցների ջանքերով, այդուհանդերձ այդ երկերի լեզվի շարահյուսական կառուցվածքը շփման եզրեր ունի ժամա-նակի գրական աշխարհաբարի հետ, կրում է վերջինիս որոշակի ազդեցությունը:

Այդպիսին են հատկապես Ա. Կրետացու, Մ. Թադիսդյանի, Մ. Մանրյանի երկերը: Այդ ազդեցությունից զերծ չեն Մ. Շահումյանի, Ա. Նրևանցու, Խ. Զուղալեցու աշխատությունները, որ-քան էլ դրանք զբված կամ մշակված են գրաբարին համապատասխան: Մնացած երկերում շա-րահյուսական փոփոխությունները հանդես են գալիս այնքանով, որքանով դրանք բնորոշ են նոր շրջանի գրաբար հայերենին:

Գրաբար պատմագրության լեզվի շարահյուսական փոփոխությունները երևան են գալիս շարադասության, համաձայնության և որոշ նախդիրների կիրառության մեջ:

1. Հին գրական հայերենն ուներ հարաբերականորեն ազատ շարադասություն: Այս դեպ-քում անգամ առանձնացվում են երևույթը բնութագրող որոշակի կանոններ:

Նախադասության ենթակայի և ստորոգյալի հարաբերության տեսակետից պատմագրության երկերը հանդես են բերում ազատ շարահասության տարբեր սահմաններ: Ըստ այդմ հիշյալ երկերը կարելի է դասդասել հետևյալ կերպ:

Ս. Շահումյանը, Ա. Երևանցին, Ա. Կրետացին, որոշ չափով նաև Ե. Հ. Ջալալյանը, Մ. Թաղիադյանը ավելի մեծ հակում ունեն ստորոգյալի ետադաս կիրառության. դա մեծ մասամբ աշխարհարարի աղբյուրային պիտի բացատրել: Իսկ Մ. Չամչյանը, Հ. Սեբաստացին, Վեկարազիր վարուցը—ը, «Համառոտ նկարագիր»-ը, մասամբ նաև Խ. Ջուղայեցին, բնահավասար, ավելի են դերադասում ենթակայի ետադաս կիրառությունը: Սա բացատրվում է գրաբարին ավելի շատ հետամուտ լինելու հանգամանքով: Ա. Երևանցու գրքի, օրինակ, I գլխի 5-րդ հատվածում (էջ 6—7) կիրառված նախադասությունների բոլոր կարգի ստորոգյալները ճշող մեծամասնությամբ ետադաս են ոչ միայն ենթակայի, այլև իրենց իսկ լրացումների հարաբերությամբ. հիմա. «Եւ զայս նենգութիւն նորա վաղղանն ոչ իմանայր: Ի վերայ այսր ամենայն իործամ այր ոմն ղլուր դործոյն և գալստեան Մահմէտղուլոյն հասուցանէր վաղղանայ, ի նմին ժամու կարողիկոսն առ նմա Լղիալ՝ զբանն զայն սուտ և ընդունայն ցուցանէր, և վաղղանն անգիտացելալ նենգութեանց նորա՝ հաւատայր նմա և անկասկած լինէր, թէպէտ և զգօրս հանապաղ ի պատրաստութեան պահէր»: Հ. Սեբաստացուց բերվող օրինակում ստորոգյալներն ունեն առաջադաս կիրառություն. «Եւ ապա արկին հուր ի քաղաքն յամենայն տեղիս՝ յապարանս և ի մեծամեծ շինուածս և յեկեղեցիս, ղորս հարիւր քուէ Ուրհայեցի պատմիչն, ամեննին զմրեթաշէնք և ահեղք» (էջ 42) և այլն:

Որոշիչ և հատկացուցչի կիրառությունը ավելի է հնոանում հին գրական հայերենի համար սահմանվող կանոններից: Գոյականական այդ լրացումները զգալիորեն փոփոխված են այն երկերում, որոնցում հեղինակները հատուկ վերաբերմունք չեն արտահայտում կամ, ընդհակառակը, խորամուխ են դրաբարի համապատասխան կանոններին հետևելու գործում:

Հ. Շարահյուսական անհամաձայնության դեպքերը այս դարերի գրաբար պատմագրության մեջ պատճառաբանվում են ամենից առաջ հայերենի՝ նոր շրջանում խոսակցական հիմքեր ունեցող գրական աշխարհաբարի աղբյուրային բնույթով: Որոշ դեր ունեն նաև այդ երկերի հեղինակների հանդես բերած անհետեղականությունը, տպագրական վրիպումները:

Համաձայնության խախտումները երևան են դալիս հատկապես ենթակայի և ստորոգյալի հարաբերության մեջ, գոյականի լրացումների թվային և հոլովական արտահայտության դեպքում:

Գրաբարի համաձայնության խախտումներն այստեղ ավելի շատ հանդես են դալիս գոյականի որոշիչ լրացումների մեջ. մյուս դեպքերում համաձայնությունը իրականացվում է գրեթե անվերապա եղանակով: Համաձայնության խախտումները նվազագույնի են հասնում այն երկերում, որոնցում գրաբարի կանոններին հետևելը հատուկ ուշադրության առարկա է: Վենետիկցիների երկերում, օրինակ, այդ կարգի շեղումները ավելի քիչ են:

Ենթակայի և ստորոգյալի համաձայնության խախտումները շատ հազվադեպ են. անհոգնական գոյականով ենթակայի հետ երբեմն գործածվում է հոգնակի ստորոգյալ, թվական որոշիչ հետ առնվող եղակի ենթական տեղ-տեղ հարաբերվում է հոգնակի ստորոգյալին՝ առաջ բերելով իմաստային համաձայնություն. «Իսկ ժողովուրդ գիւղորէիցն, ուր ի միասին հաւաքեալ էին (որպէս ի վեր ասացաք), ամենեքեան անցին ի հաշիւօրու լեռանցն ի յերկիրն Չավնդուր» (ՄՇԴԲ, 27). «Ի յայս միջոցի ծոցոյ երկրիս արեւելեայց խառն ընդ հարաւ և ընդ հիւսիս կողմանս Եւրոպիոյ՝ Խիւսեալ էին ազգն Պարսից, որ զըլլապաշն կոչիւր» (ԵՁՊԱ, 2). «Եւ ուր հարիւր այր ի զլիաւորաց քաղաքին և ի մեծամեծացն փախուցեալ և մտեալ էին ի մամն իւրեանց» (ԵՁՊԱ, 32) և այլն:

Երբեմն, հատկապես ձեռագրերում, բաղմակի ենթակաների ստորոգյալը դրվում է եզակի. «Քանզի ի թաղմանէ աւուր երանելոյն Յունանու վարդապետին մինչև ղԺ (=10) աւուրս, սաստիկ մուրն և մառախուղն ոչ վերացաւ ի յերկրէ և ի նահանգէս (ձեռ. 9745, 4):

Նախադաս բաղմական որոշիչները երբեմն համաձայնում են իրենց որոշյալներին: Այս իրողությունը նկատվում է, օրինակ, Խ. Ջուղայեցու երկում. «Եւ կամ է՞ր արդեօք հեղղասցուր առ ի արաքսառաքուրի աշօփ լալ և ողբալ» (էջ 104). «Որ իւրով անհնի իմաստութեամբն և ձգնողական վարուրն» (էջ 153) և այլն:

3. Պատմագրության գրեթե բոլոր երկերում գրաբարի նախդիրներից ամենաշատ խախտված է դ-ի կիրառությունը: Երբեմն միևնույն դործում դ-ի ուշադիր, հետեղական կիրառության կողքին նկատվում են բացթողման դեպքեր: Այստեղ, բնականաբար, զգացվում է հայցական հոլովի աննախդիր կիրառության աշխարհաբարյան միտումը. «Եւ զի ունէր նա ղուար-

թաղէմ կերպարանս և զգօնամիտ բանս» (ՄՁՊՀ, 762). «առաքէր լրանես» (ՄՁՊՀ, 815). «մնաց երկիրս ամս երկուս» (ՅՄՊՍ, 39, այլև՝ ամս երկու. 40). «որք առանձին առանձին տիրապեանէին պայազատարար՝ շէնս, գեօղս, փաղափս և զունդս» (ՄՄՀ, 1) և այլն:

Հանդիպում են այլ նախդիրների ոչ սովորական, գրաբարին ինչ-որ շարժով խորթ կիրառություններ. «անդանօր յընդ միմեանս խառնեալ պատերազմեցան» (ԽՁՊՊ, 243). «Եւ որք շուրջ գերեւանս գտան բնակք ի գեօղս և յագարակս» (ԱԵՊՊ, 13). «յորժամ դիւատոր զօրացն պարտեցաւ զեղով կնոջն և զփառէր նովաւ» (ԽՁՊՊ, 292). «և սպանանէ զնա ի ներ վրանի իւրում» (ԽՁՊՊ, 284) և այլն:

Այսպիսով, գրաբար պատմագրության լեզվի սեղմ նկարագրությունը հանգեցնում է հետևյալ եզրակացությունների. ա) հայերենի նոր շրջանում գործառուղ գրաբարի բնորոշ առանձնահատկությունները երևան են գալիս նաև պատմագրության երկերում. բ) այս անխուսափելի փոխազդեցության մեջ է ժամանակի աշխարհաբարի հետ, ենթարկվում է սրբագրական որոշ միջամտության, զերծ է լատինաբանությունից, գ) բառապաշարը բնութագրվում է գործառական-ոճական տարբերակվածություն ունեցող և սովորական կիրառությամբ հանդես եկող սոր բառերով և բառերի իմաստային նոր կիրառություններով. դ) առկա են բառային մեկ ընդհանուր հասկացություն արտահայտող նոր, զարկվածային բառակապակցություններ. ե) քերականական կառուցվածքը նոր պայմաններում հանգես է բերում զգալի թվով փոփոխություններ:

ЯЗЫКОВАЯ ХАРАКТЕРИСТИКА ИСТОРИОГРАФИИ НА ГРАБАРЕ В XVIII—XIX ВЕКАХ

В. Г. АМБАРЦУМЯН

(Резюме)

Историография на грабаре в XVIII—XIX веках, рассматриваемая в статье на материале более чем 15 письменных памятников, отличается своеобразным использованием языковых потенций. Особое внимание привлекают новые слова и термины, отражающие социально-политическую жизнь эпохи. Некоторые лексические новообразования, не имеющие чисто историографического функционально-стилистического оттенка, являются обыкновенными лексическими нововведениями. Встречаются новые смысловые употребления, которые представляют часть соответствующих понятий эпохи. Изменения происходят и в синтаксической структуре. Характерные лексические и грамматические формы и образования в основном либо обусловлены внутренними и внешними факторами развития грабара нового периода, либо относятся к чертам авторского стиля.